ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
«ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 9
ՀԻՄՆԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ГЮМРТСКАЯ ОСНОВНАЯ #9
REPUBLIC OF ARMENIA SHIRAKI MARZ GYUMRI
BASIC SCHOOL

ք Գյումրի, Հաղթանակի 40
☎ (0312) 5-51-47

c. Gyumri st. Haghtanak 40
☎ (0312) 5-51-47

<<14>> հոկտեմբերի 2024 թվական

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար 2024 թվականի օգոստոսի 8-ին կնքվել է N 3 «ՇՄԳ9ՀԴ-ԳՀԱՊՁԲ-24/1-3» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի 1.1 կետով սահմանված է՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Սակայն մատակարարի կողմից բազմաթիվ անգամներ եղել են պայամանգրային պարտավորությունների խախտումներ, ինչի արդյունքում գրավոր տեղեկացվել և զգուշացվել է պայամանգրի կողմին: Պայամանագրի կողմ հանդիսացող «Մանյա Գրիգորի Աթոյան» Ա/Ձ (ՀՎՀՀ՝ 49811276)-ն ապրանքները մատակարարել է ժամկետների խախտումներով ինչպես նաև սխալ հաշվարկային հաշիվներ դուրս գրելով, որոնց համար տեղեկացվել է և՛ բանավոր, և՛ գրավոր, իսկ 09.10.2024 թվականին ուղարկվել է պատվեր սակայն հաշիվ ապրանքագիրը դուրս է գրվել 11.10.2024 թվականին, իսկ ապրանքների փաստացի մատակարարումը եղել է 14.10.2024 թվականին ժամը 15:30-ին անհայտ անձի կողմից, որը չի ներկայացրել սանգրքույկ և անձը հաստատող փաստաթուղթ: Ճշտումներ անելու նպատակով զանգահարել ենք տվյալ Ա/Ձ-ին պատկանող հեռախոսահամարին, սակայն չեն պատասխանել զանգին, առաքիչ հանդիսացող անձը բոլոր հարցադրումներին պատասխանել է ոչ բարեկիրթ ձևով: Կարևորելով երեխաների անվտանգությունը և այն, որ խախտվել է պայմանագրով սահմանված

Scanned with ACE Scanner

մատակարարման ժամկետը, ապրանքները համապատասխան ստորաբաժանման կողմից չեն ընդունվել, ինչի արդյունքում էլ խաթարվել է դպրոցի բնականոն ընթացքը:

Համաձայն ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար ապրանքի մատակարարման N 3 «ՇՄԳ9ՀԴ-ԳՀԱՊՁԲ-24/1-3» պայմանագրի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

2.1.7.1 կետի՝ պայմանագիրը միակողմանի լուծարվել է, քանի որ վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը.

ա) մատակարարել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել մեզ համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք 5 աշխատանքային օրվա ընթացում՝ մինչև ս.թ. հոկտեմբերի 21-ը ներառյալ, ապահովել տուժանքների, մասնավորապես՝ որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման վճարների փոխանցումը 900218000132 հաշվեհամարին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով. Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների

Scanned with ACE Scanner

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Եթե մասնակիցը վճարումը է վերը նշված ապահովումները, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշում չի ներակայցնում լիազորված մարմին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ջ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Scanned with ACE Scanner